

Մխիթար Գաբրիելյան

պ. գ. թ.

Երևանի Պետական Համալսարան,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
m.gabrielyan@ysu.am

Նազիկ Գաբրիելյան

աշխ. գ. թ.

Սանկտ-Պետերբուրգ
nazikgab@yahoo.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՐՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՄԱՄՅԱԿՈՒՄ. ՄՃԱԿՈՒՅԹ ԹԵ՞ ՀԱԿԱՄՇԱԿՈՒՅԹ

Բանալի քստեր. Հայկական գյուղ, տնտեսություն, վերափոխումներ, հողի սեփականաշնորհում, համայնք, համագործակցություն, ճգնաժամ, մշակույթ, փոփոխություններ:

Տնտեսության կազմակերպումը, տնտեսական հարաբերությունների մոդելները ձևավորվում, զարգանում ու փոփոխությունների են ենթարկվում սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությամբ՝ իրենց հերթին ազդելով վերջիններիս վրա: Խորհրդային պլանային տնտեսությունը հենց այդպիսի մոդել էր: Մի քանի տասնամյակ տևած տնտեսական զարգացումները/վերափոխումները, ըստ խորհրդային պետության ձևակերպած նպատակների, ի վերջո պետք է հանգեցնեին խորհրդային մարդու կայացմանը, ով տարբերվում էր իր բազային հատկանիշներով ու բնութագրիչներով:

Գյուղատնտեսության կազմակերպման խորհրդային համակարգը նույնպես զարգանում էր այս տրամաբանության շրջանակներում: Կոլեկտիվի ձևավորման, անձնականը կոլեկտիվին ստորադաստեղծում ուղղված առաջին քայլերից մեկը 1930-ական թթ. կոլեկտիվացումն էր, պարտադրվող հրաժարումը անհատական տնտեսվարումից (կամ ինչպես ձևակերպում էին՝ մասնավոր սեփականությունից): Խորհրդագիտական գրականության մեջ այս գործողության ողբերգական, կործանարար հետևանքները համակողմանի քննության առարկա են դարձել: Կոլեկտիվացման, դրան հաջորդող, որոշ դեպքերում զուգահեռ իրականացվող բռնաճնշումների արդյունքում գյուղը, այդ թվում՝ հայաստանյան գյուղը զրկվեց որպես կուլակ պիտակավորված հազարավոր ընտանիքներից, որոնց հիմնական մեղքն այն էր, որ գիտեին ու սիրում էին աշխատել և հակադրվում էին առաջարկվող անիմաստ վերափոխումներին:

Կոլեկտիվացման ու հետագա անհաջողությունները խորհրդային համակարգին ստիպեցին մասամբ վերանայել գյուղատնտեսության կազմակերպման բազային մոտեցումները, ինչի արդյունքում ետպատերազմյան տասնամյակներին կոլեկտիվ տնտեսություններին փոխարինեցին խորհրդային տնտեսությունները:

Մոտեցման փոփոխությունն իրականում ճգնաժամը հաղթահարելու նպատակ ունեւր (Тер-Саркисянц 1986):

Գյուղը՝ որպէս սոցիալ-տնտեսական ու մշակութային բարդ օրգանիզմ, ետպատերազմյան տասնամյակներում հայտնվել էր խորը ճգնաժամի մեջ տարբեր պատճառներով: Դրանցից մեկը ժողովրդագրական իրավիճակն էր, որին մինչ օրս բավարար ուշադրություն չի դարձվել: Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած հարյուր հազարավոր տղամարդիկ չվերադարձան պատերազմից՝ խաթարելով ժողովրդագրական բնականոն զարգացումը: Խորհրդային Հայաստանում հազարավոր ընտանիքներ դարձան թերի կազմ ունեցող, կնոջ կամ պատերազմում զոհվածի ծնողների կողմից գլխավորվող: Վերադարձածների բավականին մեծ մասն ունեւր առողջական խնդիրներ: Ժողովրդագրական այս պատկերը կտրուկ սահմանափակեց արդյունավետ գյուղատնտեսության կազմակերպման հնարավորությունները: 1950–60-ական թթ. սկսվեց մեկ այլ գործընթաց, այսպէս կոչված ժողովրդագրական բումը, երբ լրիվ կազմով ընտանիքները, պատերազմի ժողովրդագրական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով սկսեցին շատ երեխաներ ունենալ: Սա իր հերթին հանգեցրեց նրան, որ կանգնելով ընտանիք պահելու, երեխաներին կրթության ու դաստիարակության տալու խնդրի առաջ, հարյուրավոր տղամարդիկ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում ցածր աշխատավարձի փոխարեն նախընտրեցին «խոպանի» բարձր եկամուտներն ու արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքը:

1970–80-ական թթ., չնայած դրական տեղաշարժերին, գյուղատնտեսությունը Խորհրդային Հայաստանում հայտնվել էր լուրջ խնդիրների առաջ: Ո՛չ խիստ քննադատությունը, ո՛չ այլևայլ միջոցառումները ի գործու չէին կանգնեցնել ճգնաժամն ու խորացող անկումը: Հարկավոր էին համակարգային միջոցառումներ ու փոփոխություններ: Նման փորձ ձեռնարկվեց 1980-ական թթ. կեսերին, գորբաչովյան վերակառուցման տարիներին, երբ առանձին անհատներ ու կոլեկտիվներ, երբեմն նաև առանձին բրիգադներ կապալային սկզբունքով սկսեցին վարձակալել այգիներ, վարելահողեր ու այլ տարածքներ: Այս փորձը բավականին հաջող էր ու երկուստեք ձեռնտու, սակայն ոչ բավարար համակարգային ճգնաժամը հաղթահարելու համար:

Գյուղի ու գյուղատնտեսության զարգացման հերթական փուլը սկսվեց 1991 թ.՝ ԽՍՀՄ փլուզմամբ և անկախության հռչակմամբ պայմանավորված: Հայաստանի փաստացի իշխանություն «Ղարաբաղ» Կոմիտեն, որ հետո դարձավ նաև իրական իշխանություն, որպէս գյուղատնտեսության ճգնաժամի հաղթահարման հիմնական տարբերակ նախընտրեց համատարած և արագ սեփականաշնորհումը (Գաբրիելյան 2001, 16; Մանասերեան 1997, 27–28; Մինասյան 2003):

Գրառված ազգագրական նյութերը, ինչպէս նաև ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերափոխումները կանոնակարգող օրենքները և կառավարության որոշումներն («Հողային օրենսգիրք» 1995; «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» 1991) ընդունվեցին հապճեպ, կարճ ժամանակում, երբ դեռևս վերջնականապէս հստակեցված ու օրենսդրորեն ամրագրված չէին տնտեսական վերափոխումների հիմնական դրույթներն ու տնտե-

սական զարգացման գերակայությունները և դրանց իրագործման մեխանիզմները: Շտապողականությունը բացասաբար ազդեց գործընթացի իրագործումն ապահովող օրենսդրական դաշտի ձևավորման վրա: 1991թ. ընդունված տարբեր օրենքներում և որոշումներում, ինչպես նաև գործընթացի անմիջական իրագործման փուլում գերիշխում էր այն միտումը, որ վերափոխումները միաժամաակ և արագընթաց պետք է իրագործվեն հանրապետության բոլոր գյուղերում և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում: Այս հիմնական դրույթները տեղ էին գտել նաև վերափոխումների օրենսդրական հենքը ապահովող փաստաթղթերում՝ 1991թ. հունվարին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքում, «Հողային օրենսգրքում», ինչպես նաև նախարարների խորհրդի մոտ չորս տասնյակ որոշումներում:

Սեփականաշնորհման փաստաթղթերի, ազգագրական նյութերի համադրումն ու ընդհանրացումը թույլ են տալիս արձանագրել, որ արդեն իրագործման առաջին փուլում, նշված և բազմաթիվ այլ գործոններով պայմանավորված, սեփականաշնորհման և հողային բարեփոխումների գործընթացն ուներ էական թերություններ, որոնք ազդեցին հայկական գյուղի հետագա տասնամյակների սոցիալ-մշակութային ու տնտեսական զարգացումների վրա:

Հիմնական թերություններից մեկը *փարբերակված մուրեցման բացակայությունն էր*: Հաշվի չառնվեցին հանրապետության առանձին շրջանների ու գյուղերի՝ նախընթաց զարգացմամբ պայմանավորված տարբերությունները, սեփականաշնորհումը նույն սկզբունքով իրագործվեց և բարձրլեռնային և հարթավայրային, և սակավահող և հողատարածքներով ապահովված գյուղական բնակավայրերում: Գյուղի ու գյուղատնտեսության վրա ավելի ծանր ազդեցություն ունեցավ անասնազվխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի ու գյուղատնտեսական նշանակության շենք-շինությունների վաճառք-սեփականաշնորհումը:

Երկրորդ խնդիրը վերաբերում է *պետության դերի և հիմնական գործառնությունների հստակեցված չլինելուն*: Գյուղատնտեսությունում իրականացված վերափոխումները նախորդեցին տնտեսության այլ ճյուղերում իրականացված փոփոխություններին, ինչն առաջացրեց բազմաթիվ բարդություններ՝ գյուղմթերքների իրացման, գյուղատնտեսական աշխատանքների ամբողջական ցիկլի կազմակերպման հետ կապված:

Ազգագրական փեսանկյունից կարևոր նշանակություն ունի, որ հաշվի չառնվեցին նախընթաց զարգացմամբ պայմանավորված իրողությունները: 1970–80-ական թթ. ձևավորվել էր այնպիսի իրավիճակ, երբ հանրապետության տարբեր գյուղերում, սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային տարբեր խմբերի մոտ տարբեր էր ոչ միայն գյուղատնտեսական զբաղմունքների հանդեպ ձևավորված վերաբերմունքը: Հարյուրավոր ընտանիքներ, նույն այդ վերաբերմունքով պայմանավորված, գյուղում բնակվելով հանդերձ, հիմնականում օտարված էին գյուղատնտեսական զբաղմունքներից: Մանկավարժների, գյուղերում գործող տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների ներգրավվածությունը գյուղատնտեսական աշխատանքներում սիմվոլիկ էր, սահմանափակվելով հիմնականում տնամերձ փոքր հողակտորների մշակությամբ: Կային նաև արտագնացության

կայուն ավանդույթներ ունեցող գյուղեր, որոնցում հիմնական եկամուտը ապահովում էին ամիսներ շարունակ բացակայող տղամարդիկ: Ակնհայտ է, որ այս խմբերի վերաբերմունքը նույնը չէր գյուղատնտեսության նկատմամբ, սակայն հողի սեփականաշնորհման գործընթացում այս առանձնահատկությունները անտեսվեցին:

Այս խնդիրները չլուծելը հանգեցրեց նրան, որ արդեն 1991 թ. վերջին–1992 թ. սկզբին հանրապետությունում ձևավորվեցին հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված անհատական գյուղացիական տնտեսություններ, որոնք էապես տարբերվում էին իրենց հնարավորություններով: Համեմատության համար նշենք, որ տնտեսությունների ապահովվածությունը վարելահողերով տատանվում էր 0.36 հա-ի (Արտաշատի շրջան) և 6.32 հա-ի (Աշոցքի շրջան) սահմաններում կամ 1/18 հարաբերությամբ: Մրան հավելենք, որ տնտեսությունների գերակշռող մասի հողերը բաժանված էին երկուսից չորս հողակտորի:

Տնտեսական վերափոխումները ուղղակի ազդեցություն ունեցան նաև գյուղի սոցիալ-մշակութային ու կառուցվածքային պատկերի վրա: Տնտեսության կտրուկ անկումը, աղքատության տեսակարար կշռի անընդհատ աճը, պատերազմը, զանգվածային գործազրկությունն ու այլ իրողություններ հանգեցրին նրան, որ էական փոփոխություններ տեղի ունեցան հայկական գյուղի սոցիալ-մասնագիտական կառուցվածքում: Խորհրդային տարիներին գյուղի սոցիալական աստիճանակարգման սանդղակում հարգի դիրք գրավող մանկավարժները, տեխնիկական մտավորականության ներկայացուցիչները բառացիորեն ամիսների ընթացքում զրկվեցին սոցիալական կարևոր դերերից ու դրանց ընձեռած նյութական հնարավորություններից, դառնալով հողի սեփականատեր, սակայն հաճախ չունենալով գյուղատնտեսությամբ զբաղվելու բավարար ցանկություն, փորձառություն ու հմտություններ:

Տնտեսական գործունեության այս համակարգային փոփոխությունը այլ հետևանքներ ևս ունեցավ: Գյուղատնտեսության կազմակերպման խորհրդային համակարգը կարևորում էր կոլեկտիվի ու կոլեկտիվի անդամ լինելու գաղափարի ամրագրումը. գյուղացին իրեն դիրքավորում էր որպես կոլտնտեսական, որպես բրիգադի անդամ, կոլտնտեսության կամ խորհրդային տնտեսության աշխատակից, ներգրավված էր սոցիալիստական մրցությունում, ստանում էր պատվոգրեր, շնորհակալագրեր և այսպես շարունակ: Այս բոլոր գործողությունները որոշակի ազդեցություն ունեին գյուղական միջավայրի, անհատի նախընտրությունների, լայն առումով՝ կյանքի կազմակերպման, առօրեականությունն ու այլ իրողությունների վրա: Գյուղացին, տնտեսության անդամը նույնիսկ ցանկության դեպքում չէր կարող իրեն դուրս դնել կոլեկտիվից:

Հողի սեփականաշնորհումից հետո պատկերն էապես փոխվեց: Կոլեկտիվ աշխատանքները աստիճանաբար սահմանափակվեցին անհատական գյուղացիական տնտեսությունում ներդրումով, անհատական ջանքով: Սա իր հերթին ժամանակի ընթացքում բերեց համայնքային ու դրացիական ռացիոնալ, տնտեսական հիմքի վրա կառուցված հարաբերությունների աստիճանական թուլացմանը: Փոխարենը աստիճանաբար առաջնային դարձան այնպիսի կապերը, հարաբե-

րություններն ու փոխհարաբերությունները, որ տեղավորվում էին գոյատևման ռազմավարության շրջանակներում (օրինակ՝ միմյանց պարտքով փող տալ): Ճգնաժամի հաղթահարման հիմնական ելքերից մեկը դարձավ արտագնացությունը, որը, ընտանիքի տնտեսական հարցերը լուծելով հանդերձ, էլ ավելի խորացրեց արդեն ուրվագծվող խնդիրները: Մասնավորապես, ավելի ու ավելի էր բարդանում երեխաների դաստիարակությունը, տղամարդկանց տնական բացակայությունը և այստեղ՝ գյուղում և այնտեղ՝ արտագնացության վայրերում, ձևավորում էր սոցիալ-հոգեբանական տարաբնույթ խնդիրներ:

«Անհատ»-ացումը սահմանափակեց նաև արդյունավետ գյուղատնտեսության ամբողջական ցիկլի կազմակերպման հնարավորությունները, նվազագույնի հասցվեցին կոլեկտիվ ջանքերն ու նախաձեռնությունները:

Անփոփելով՝ արձանագրենք, որ հայաստանյան գյուղը մինչ օրս չի հաղթահարել հողի սեփականաշնորհման բացասական հետևանքները: Դրանք միայն տնտեսական գործունեությանը չեն վերաբերում: Առկա են բազմաթիվ խնդիրներ երեխաների դաստիարակության, ներընտանեկան հարաբերությունների, համայնքային մասնակցության հետ կապված: Արդյունքում, շատ դեպքերում արձանագրվում է այնպիսի վիճակ, երբ գյուղի վիճակն ու զարգացումը պայմանավորում են ոչ թե ռացիոնալ մշակութային իրողությունները, այլ «հակամշակութային», իռացիոնալը, որոնք ավելի են սահմանափակում հայկական գյուղի զարգացման առանց այն էլ սահմանափակ հնարավորությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 2001–Գաբրիելյան Մ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Երևան, «Գիտություն», 2001:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 2008–Գաբրիելյան Մ., Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Երևան, 2008:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄԻՆ 1991–Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Եր., 1991, Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990–1995), Երևան, 1995:

ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐԳ 1991–Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգիրք», Երեվան, 1991, Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990–1995), Երևան, 1995:

ՄԱՆԱՍԵՐԵԱՆ 1997–Մանասերեան Ն., Հայաստանի գիղատնտեսությունը յետ-սեփականաշնորհման փուլում, Դրօշակ, թիվ 11, 1997:

ՄԻՆԱՍՅԱՆ 2003–Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990–2003 թթ.), Երևան, 2003, 27–35:

ТЕР-САРКИСЯНЦ 1986 – Тер-Саркисянц А., Современные изменения в материальной культуре армянского сельского населения, Современные этносоциальные процессы на селе, Москва, 1986.

Mkhitar Gabrielyan

Ph.D.

Yerevan State University, Institute of Archaeology and Ethnography, NAS
m.gabrielyan@ysu.am

Nazik Gabrielyan

Ph.D.

St. Petersburg
nazikgab@yahoo.com

ARMENIAN VILLAGE OF 30 YEARS PERIOD OF INDEPENDENCE: CULTURE OR COUNTERCULTURE?

Keywords: Armenian village, economy, reforms, land privatization, community, cooperation, crisis, culture, transformation.

Soviet village was in deep social, cultural and economic crisis at 1970–80's despite the efforts of Soviet policy. The efforts to overcome the crisis during “Perestroika”, made some positive changes, although made clear the assumption that solutions would be possible only in case of systemic changes. Another attempt to overcome the crisis was undertaken at 1991, just after declaration of Armenia's independence. The reform of Land privatization was launched aimed at introduction of private ownership over lands, cattle, agricultural and farming machinery etc. However, it was clear since the beginning that the Armenian village will soon face new challenges due to land reform when the process itself and some activities were in contradiction with development of Armenian village. Due to land reform Armenian village entered new phase of economic, social and cultural crisis which has not been overcome yet.

Мхитар Габриелян

к. и. н

*Ереванский государственный университет,
Институт археологии и этнографии*
m.gabrielyan@ysu.am

Назик Габриелян

к. г. н

Санкт-Петербург
nazikgab@yahoo.com

АРМЯНСКАЯ ДЕРЕВНЯ В ТЕЧЕНИИ ТРИДЦАТИ ЛЕТ НЕЗАВИСИМОСТИ: КУЛЬТУРА ИЛИ КОНТРАКУЛЬТУРА?

Ключевые слова: Армянская деревня, экономика, реформы, приватизация земли, община, кооперация, кризис, культура, изменения.

Советская армянская деревня, несмотря на усилия властей, в начале 1970-80-ых гг. находилась в глубоком экономическом и социально-культурном кризисе. Попытки преодолеть кризис, предпринятые в ходе перестройки, обеспечили позитивные изменения, одновременно доказав, что преодоление кризиса возможно только при системных изменениях. Очередная попытка преодоления кризиса была предпринята в 1991-ом году, сразу после провозглашения независимости Республики Армения. Власти республики начали процесс «Земельных реформ и приватизации», основной целью которой стало внедрение института права частной собственности на землю, а также приватизация и прямая продажа скота, сельхозинвентаря, сельхозтехники. Однако уже в начале процесса стало ясно, что армянская деревня в самом ближайшем будущем столкнется с новыми трудностями, так-как сам ход приватизации, отдельные мероприятия противоречили тенденциям развития армянской деревни. В результате приватизации армянская деревня вошла в новую фазу как экономического, так и социального, культурного кризиса, который еще не преодолен.